յին՝ անդրկովկասեան յարաբերութիւնները բնականոն վիճակի մէջ դնելու տեսակէտից — թէ՛ դաւառական ինքնավարութեանց (զեմըստվո) խնդիրը ամէն անգամ արծարծուելու ժամանակ եւ թէ՛, մանաւանդ, Անդրկովկասում աղգային պետութիւններ ստեղծելու միջոցին: Ծանօթ փաստ է նաեւ, որ ցարական այդ արատաւոր քաղաքականութիւնը հարազատօրէն ժառանգեց ու այսօր էլ դեռ շարունակում է պինդ պահել նրա շառաւիղը՝ Խորհրդային պիտակի տակ:

Այսպէս էր ահա դնահատում ռուս կառավարութիւնը, Հաքստհաուզէնի օրով, հայութեան փարուածութիւնը ռուս դրօշին, այդպէս է դնահատում նոյն կառավարութեան Խորհրդային ժառանդորդը եւ հայութեան այս օրուա՛ն փարուածութիւնը նոյն ռուս — թող լինի նա կարմրած — դրօշին: Եւ դա՝ հակառակ այն բանի, որ, ինչպէս 80–90 տարի սրանից առաջ, այնպէս նաեւ թերեւս այսօր — կրկնենք Հաքստհաուզէնի խօսքը — հայութիւնը «Անդրկովկասի միակ ժողովուրդն է, որ ամենամեծ հաւատարմութեամբ փարած է Ռուսաստանի դրօշին»:

Հայութիւնը իր պատմութեան մի ղերադոյն մոմենտին պատռեց աշխարհակալի դրօշը իր հայրենիքում եւ սեփակա՛նը հիւսեց, բայց՝ ընկաւ անհաւասար կռուի մէջ: Նա փորձեց ոտքի կանգնել, ուզեց ենթակա՛յ դառնալու փոխարէն՝ կո՛ղմ դառնալ — ինչպէս որ Անանունն է բնորոշում — բայց տապալուեց: Եւ սակայն, հայութիւնը մասնաւորապէս եւ անդրկովկասեան ժողովուրդները ընդհանրապէս իրենց դարաւոր փորձութիւններից ու փորձերից յետոյ խելամուտ լինելու են վերջապէս, թէ ի՞նչպէս թանդ է նստում իրենց՝ «ազնիւ մաքլերի» (միջնորդի) ծառայութիւնը, սովորելու են վերջապէս կարգադրել իրենց գործերը՝ փոխադարձ համաձայնութեան դետնի վրայ, որպէսզի հարկադրուած չլինեն ամէն անգամ մեծագին եւ յաւելեալ տուրք վճարել օտար աշխարհակալների շատ կասկածելի միջնորդութիւնների համար:

Հայութիւնը պարզ աչքերով տեսնում է, թէ ի՛նչպէս է «դնահատում» իր հաւատարիմ նուիրուածութիւնը եւ թէ ի՛նչպէս է «պատժում» — քաղաքական տարբեր ուղղի: Այդ է արդէն հոդեբանութիւնը եւ քաղաքական վարքագիծը բոլոր ժամանակների եւ բոլոր վայրենի աշխարհակալների, այսինքն՝ արհամարհել, բնաւ հաշուի չառնել թոյլ բարեկամին, միանգամայն վստահ լինելով, որ նա, միեւնոյնն է, ամէն պարագայի տակ «փարուած» պիտի մնայ տիրապետողի դրօշին, հաւատարմօրէն պիտի ծառայի նրան: Ոչինչ ուրեմն, եթէ տէրը նրան անուշադրութեան մատնի ու դրա փոխարէն ջանքեր թափի՝ նրա հաշուին գոհացում պատճառելու, սիրաշահելու անհաւատարիմ դիտուածներին:

* * *

Մի քանի խօսք էլ այն մասին, թէ պարսկակա՛ն տիրապետութեան վերջը Անդրկովկասեան Հայաստանը վարչական–տնտեսական տեսակէտից ի՛նչ պատկեր էր ներկայացնում, մանաւանդ որ այդ կողմից եւս պարսկական ժառանգութեան հետքերը դեռ բաւական ժամանակ մնացին մեր երկրում:

«Պարսկական վարչութիւնը, ասում է Հաքստհաուզէն, թէ՛ իր հիմունքներով եւ թէ՛ կազմակերպութեամբ այնչափ վատ է, որ մինչեւ իսկ այնպիսի արդարամիտ եւ ընտիր մարդիկ, ինչպիսին էր Երեւանի վերջին սարդարը*) եւ որի ձեռքում ամբողջ իշխանութիւնը կենտրոնացած էր, հնարաւորութիւն չունէր պաշտօնէութեան աւազակային հակումներից բխող խայտառակ, ծանր վիճակը վերացնելու»:

Շահը նշանակում էր նահանգների կուսակալներին (սարդար) եւ նրանց անսահման լիազօրութիւն էր տալիս: Այդ կուսակալները պարտաւոր էին խաղաղութեան տարիներում տարբեր, պատերազմի միջոցին էլ տարբեր քանակով ռազմական ոյժ տրամադրել Շահին եւ որոշ տուրք վճարել: Դրանից դուրս այլեւս ոչ ոք չէր հետաքրքրւում, թէ սարդարը ի՛նչպէս էր ժողովում տուրքը, թէ նա ի՛նչպիսի ծանր հարկերի տակ էր դնում իր հպատակներին: Պարսկական իշխանութեան սկզբունքն է՝ եկամուտի մինչեւ մէկ երրորդը կամ սեփա-

*) Երեւանի վերջին սարդարի (պարսիկ կուսակալ, փոխարքայ) մասին Հաքստհաուզէն մանրամասն խօսում է Երեւան քաղաքը նկարագրելիս: Այդ առթիւ՝ յետոյ: